ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ

ԾՐԱԳՐԵՐԻ ԲՈՂՈՔԱԿՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ
ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԲՈՂՈՔ

ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԻՔ: ԼԻԴԻԱՆ (ԱՄՈՒԼՍԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔ)

ԲՈՂՈՔՆԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՐ: 2014/02 ԵՎ 2014/3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I.	Ամփոփ նկարագիր	
II.	Փաստացի նախապատմություն	2
III.	Իրավունակությունը որոշելու համար ձեռնարկված քայլեր	2
IV.	Կողմերի դիրքորոշումների ամփոփ նկարագիր	3
V.	Իրավունկության որոշում	7
VI.	Եզրակացություն	16

I. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Ծրագրերի բողոքարկման մեխանիզմը (ԾԲՄ) երկու սերտորեն կապված Բողոք է ստացել, որոնք պնդում են, որ ՝՝Լիդիան Ինթերնեյշնլ՝՝ ընկերության մասնակցային կապիտալում Բանկի նեդրումը չի համապատասխանում ՎԶԵԲ-ի 2008թ.-ին ընդունված Բնապահպանական և սոցիալական քաղաքականության պահանջներին, քանի որ ընկերությունն առաջարկել է Հայաստանի Ամուլսար տեղանքում ոսկու արդյունահանման գործունեություն իրականացնել: Իրավունակությունը գնահատողները վճռել են, որ Բողոքներից և ոչ մեկը իրավասու չէ ո՛չ Խնդիրների լուծման նախաձեռնության, և ո՛չ էլ Համապատասխանության վերանայման շրջանակներում քննվելու համար:

Թեև լիովին հասկանալի չէ, արդյոք Բողոքներից որևէ մեկն ըստ էության պահանջում էր քննվել Խնդիրների լուծման նախաձեռնության շրջանակներում, այնուամենայնիվ դրանք երկուսն էլ անիրավունակ են ճանաչվել այս տարբերակի համար, քանի որ նման նախաձեռնությունն ամենայն հավանականությամբ չէր կարողանա լուծել քննվող վեճը: Ի հավելումն, Բողոքներն այնպիսի գործունեությունների են վերաբերում, որոնք ներառված չեն այն Ծրագրում, որի համար Բանկը ֆինանսավորում տրամադրելու հստակ շահագրգռվածություն է հայտնել:

Ավելին, երկու Բողոքներն էլ ոչ պիտանի են ճանաչվել Համապատասխանության վերանայման շրջանակներում քննվելու համար, քանի որ դրանցից և ոչ մեկը չի վերաբերում Բանկի կողմից հաստատված Ծրագրի մաս կազմող գործունեություններին: Բողոքները կենտրոնանում են ոչ թե հետազոտման և ծրագրի նախապատրաստման գործունեությունների վրա, որոնց համար կարող է ներկայումս օգտագործվել ՎԶԵԲ-ի առկա ֆինանսավորումը, այլ ընկերության կողմից առաջարկվող ոսկու արդյունահանման գործունեության հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վրա, որոնց մասով ներկայումս ընթացքի մեջ է բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատումը, որն իրականացվում է Բանկի հետ սերտ համագործակցությամբ՝ համաձայն մասնակցային կապիտալում Բանկի ներդրման դրույթների:

ԾԲՄ-ի Իրավունակությունը գնահատողները գտնում են, որ Բողոքներից և ոչ մեկը չի բավարարում ո՛չ Խնդիրների լուծման նախաձեռնության, և ո՛չ էլ Համապատասխանության վերանայման շրջանակներում քննվելու համար ԾԲՄ չափորոշիչներին, ինչպես սահմանված է Ծրագրերի բողոքարկման մեխանիզմի (ԾԲՄ) կանոնակարգով:

II. ՓԱՍՏԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. 2014թ.-ի հուլիսի 29-ին ԾԲՄ-ն մի շարք շահագրգիռ կողմերից Բողոք (Լիդիան No. 1)[1] է ստացել, որի պնդմամբ ՝՝Լիդիան Ինթերնեյշնլ՝՝ ընկերության մասնակցային կապիտալում Բանկի նեդրումը և Հայաստանի Ամուլսար տեղանքում ընկերության կողմից առաջարկվող ոսկու արդյունահանման գործունեությունը չեն համապատասխանում ՎԶԵԲ-ի 2008թ.-ին ընդունված Բնապահպանական և սոցիալական քաղաքականության պահանջներին: 2014թ.-ի հուլիսի 31-ին Բողոքը գրանցվել է ԾԲՄ-ի աշխատակցի կողմից՝ համաձայն ԾԲՄ Կանոնակարգ 10-ի պահանջների և հրապարակվել է ԾԲՄ կայքէջում՝ համապատասխան ԾԲՄ Կանոնակարգ 13-ի պահանջների: Գրանցման մասին ծանուցումն ուղարկվել է Բողոքը ներկայացնողներին և Համապատասխան կողմերին՝ համաձայն ԾԲՄ Կանոնակարգ 12-ի պահանջների: ԾԲՄ փորձագետ Օուեն ՄըքԻնթայրը նշանակվել է Իրավունակության փորձագետ՝ ԾԲՄ աշխատակցի հետ համատեղ Բողոքի Իրավունակության գնահատումն իրականացնելու համար՝ համաձայն ԾԲՄ Կանոնակարգ 17-ի պահանջների:

2. Հետագայում, 2014թ.-ի հոկտեմբերի 29-ին, ԾԲՄ-ն Վայոց Ձորի Գնդևազ գյուղի բնակիչներից ստացավ երկրորդ՝ սերտորեն կապված Բողոքը (Լիդիան No. 2)[2], որը ՎԶԵԲ-ի առնչվող քաղաքականությանը չհամապատասխանելու նմանատիպ պնդումներ է պարունակում: Քանի որ երկրորդ Բողոքը հայտարարվող անհամապատասխանության նոր հիմքեր առաջ չի քաշում, Իրավունակությունը գնահատողները որոշեցին սույն Իրավունակության գնահատման նպատակներից ելնելով՝ երկու Բողոքները միասին քննել:

3. Ծրագիրը կազմված է ՝՝Լիդիան Ինթերնեյշնլ՝՝ ՍՊԸ-ի (Ջերսիում հիմնված և ֆոնդային բորսայում ցուցակագրված ընկերություն, որը զբաղվում է հանքային հետազոտություններով ու զարգացմամբ) կապիտալում ՎԶԵԲ-ի մասնակցային ներդրումից, որն այսօրվա դրությամբ կազմում է 10.4 մլն կանադական դոլար: ՎԶԵԲ-ի և ՝՝Լիդիան Ինթերնեյշնլ՝՝-ի միջև կնքված համաձայնագրերը սահմանում են, որ Բանկի միջոցները կարող են օգտագործվել միայն հանքային հետազոտությունների և ծրագրի նախապատրաստման գործունեությունների համար, և ոչ թե Ամուլսարի ոսկու հանքը գործարկելու նպատակով: Ներկա Բողոքներից յուրաքանչյուրն էլ պնդում է, որը Բանկը չի կարողացել ապահովել, որպեսզի առաջարկվող հանքարդյունաբերության գործառնությունների հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները պատշաճ կերպով գնահատվեն, ինչպես նաև չի ապահովել հանրային խորհրդակցությանն առնչվող պահանջներին համապատասխանությունը: Երկու բողոքների պատճենները կցված են:

---

[1] Բողոք No. 2014/02: *ՈՒՆԳ Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք)*, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.ebrd.com/downloads/integrity/amulsar_complaint.pdf

[2] Բողոք No. 2014/03: *ՈՒՆԳ Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք)*, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.ebrd.com/downloads/integrity/amulsar2_complaint.pdf

III. ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՔԱՅԼԵՐ

4. Իրավունակությունը գնահատողներն ուսումնասիրել են յուրքանչյուր Բողոքը՝ որոշելու, արդյոք դրանցից որևէ մեկը համապատասխանում է իրավունակության կիրառվող չափանիշներին, որոնք սամանված են Ծրագրերի բողոքարկման մեխանիզմի Կանոնակարգերում (ԾԲՄ ԿԿ-եր)՝ ինչպես Խնդիրների լուծման նախաձեռնության, այնպես էլ Համապատասխանության վերանայման համար շրջանակներում քննվելու համար: Նրանք ուսումնասիրել են Բանկի ղեկավարությունից և Հաճախորդից (՞Լիդիան Ինթերնեյշնլ՞) ստացված պատասխանները, ինչպես նաև Բանկի կողմից մշակված տարբեր փաստաթղթերը, այդ թվում՝ ՎԶԵԲ-ի և ՞Լիդիան Ինթերնեյշնլ՞-ի միջև պայմանագրային պայմանավորվածությունները մանրամասնող առանցքային փաստաթղթերը: Ի հավելումն, 2014թ.-ի սեպտեմբերի 18-ին Իրավունակությունը գնահատողները հանդիպեցին ՎԶԵԲ-ի Բնապահպանության և կայուն զարգացման վարչության աշխատակիցների ու Բանկի Գործառնությունների առաջնորդի հետ: Սույն Իրավունակության գնահատման նպատակներից ելնելով՝ այցը տեղանք անհրաժեշտ չի համարվել:

IV. ԿՈՂՄԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Բողոքը ներկայացնողների դիրքորոշումը

5. ՞Լիդիան No. 1՞ Բողոքում Բողոքը ներկայացնողները սկսում են այն պնդմամբ, որ Ամուլսարում ոսկու արդյունահանման գործառնությունները կխախտեն Հայաստանի օրենսդրության մի շարք դրույթներ: Մեջբերված դրույթները ներառում են Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Սահմանադրության 32-րդ հոդվածը, ՀՀ Ջրային օրենսգիրքը, ՞Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին՞ ՀՀ օրենքը, ՞Սևանա լճի մասին՞ ՀՀ օրենքը, Ուրանի արդյունահանման մասին ՀՀ Կառավարության թիվ 234 որոշումը, ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրքը, ՞Բուսական աշխարհի մասին՞ ՀՀ օրենքը, ՞Կենդանական աշխարհի մասին՞ ՀՀ օրենքը և Ջերմուկ քաղաքը որպես զբոսաշրջային կենտրոն հռչակելու մասին ՀՀ Կառավարության թիվ 1064-Ն որոշումը: Ի լրումն, Բողոքը մատնանշում է, որ ՎԶԵԲ-ը պետք է ՞համապատասխանի Օրհուսի կոնվենցիայի դրույթներին՝ հանրությանը ճանաչի որպես անմիջական շահագրգիռ կողմ, որը պետք է մասնակցի որոշումների ընդունման գործընթացին՞:[3]

6. ՞Լիդիան No. 1՞ Բողոքը պնդում է նաև, որ հանքարդյունաբերության դիտարկվող գործողությունները կխախտեն ՎԶԵԲ-ի 2008թ.-ին ընդունված Բնապահպանական և սոցիալական քաղաքականությամբ (ԲՍՔ)[4] սահմանված մի շարք Կատարողականի պահանջներ (ԿՊ), այդ թվում.
   ԿՊ 3 – Ռեսուրսների արդյունավետություն, աղտոտվածության կանխարգելում և վերահսկում;
   ԿՊ 4 – Առողջություն և անվտանգություն;
   ԿՊ 5 – Հողատարածքի ձեռքբերում, հարկադրված վերաբնակեցում և տնտեսական տարահանում;
   ԿՊ 6 – Կենսաբազմազանության պահպանում և կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում;

---

[3] Բողոք No. 2014/02, էջ 2-4
[4] *Տե՛ս նույն տեղում,* էջ 2.

ԿՊ 7 – Բնիկ ժողովուրդներ;

ԿՊ 8 – Մշակութային ժառանգություն; և

ԿՊ 10 – Տեղեկատվության բացահայտում և շահագրգիռ կողմների ներգրավում

Այնուամենայնիվ, Բողոքի տեքստը չի մանրամասնում, թե ինչպես են վերոնշյալ բոլոր Կատարողականի պահանջները խախտվել կամ հնարավոր է, որ խախտվեն:

7. Փոխարենը, ՛՛Լիդիան No. 1՛՛ Բողոքը կենտրոնանում է ենթադրվող անհամապատասխանության միակ էական հիմքի վրա, այն է՝ 2008թ.-ի ԲՍՔ ԿՊ 1-ի համաձայն կատարված բնապահպանական և սոցիալական գնահատման (ան)համապատասխանությունը: Մասնավորապես, Բողոքը պնդում է, որ ՛՛*Ամուլսարի բաց հանքարդյունաբերության ծրագրի* շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման զեկույցը՛՛ (ընդգծումներն ավելացված են) պատշաճ կերպով հաշվի չի առնում.
   - ջրին և հողին սպառնացող ռիսկերը;
   - Սևանա լճին առչնվող իրավական սահմանափակումները;
   - ռադոնի համակենտրոնացման մակարդակների հետևանքների նվազեցման համար պահանջվող միջոցառումները;
   - այդ տարածքում ուրանի հանքավայրերից ռադիոակտիվ աղտոտման ռիսկերը;
   - բուսական և կենդանական աշխարհի պահպանվող և / կամ վտանգված տեսակներին պատճառվող ռիսկերի մասին համարժեք տեղեկատվությունը;
   - Ջերմուկ քաղաքին՝ որպես զբոսաշրջային, առողջարանային կենտրոնի և շշալցված հանքային ջրի աղբյուրի սպառնացող ռիսկերը; և
   - Գնդևազ գյուղի հարևանությամբ պոչամբար կառուցելու հետ կապված ռիսկերը:

8. ՛՛Լիդիան No. 1՛՛ Բողոքը նաև աղոտ հղում է կատարում Ծրագրի հակառակորդների ենթադրվող ահաբեկմանը[5] և այլ մեղադրանքների, որոնք չեն առնչվում ԾԲՄ-ին և վերաբերում են ոչ պատշաճ դիվանագիտական լոբբինգին և Ամուլսարի ծրագրի խթանմանն ուղղված գովազդի նպատակով միջոցների օգտագործմանը[6]: Սակայն, միանգամայն հասկանալի է, որ Բողոքը ներկայացնողները հիմնականում մտահոգված են, որ ՛՛ՎԶԵԲ-ը ռիսկերի պատշաճ գնահատում չի իրականացրել՛՛ և, համապատասխանաբար, ՛՛ՎԶԵԲ-ը ֆինանսավորել է Ամուլսարի ծրագիրը՝ հիմնվելով ռիսկերի և տնտեսական օգուտների մասին ոչ հավաստի տեղեկատվության վրա՛՛:[7] Շրջակա միջավայրի գնահատման ենթադրյալ անհամապատասխանության հետ սերտորեն կապված՝ Բողոքը կոչ է անում ՎԶԵԲ-ին ապահովել ՛՛իրականացվող ցանկացած ծրագրի ամբողջական համապատասխանությունը ազգային օրենսդրության պահանջներին՛՛:[8]

9. Միանգամայն հասկանալի է նաև, որ ՛՛Ծրագրի՛՛ մասին իրենց մտահոգությունը հայտնելիս, Բողոքը ներկայացնողներն ավելի շատ ի նկատի ունեն ոսկու արդյունահանման աշխատանքները, որոնք կարող են հետագայում գործարկվել Ամուլսարի տեղանքում, քան հետազոտությունները և ծրագրի նախապատրաստման գործունեությունները, որոնք բնութագրում են ՎԶԵԲ-ի ներկայիս ծրագիրը: Օրինակ, ՛՛Լիդիան No. 1՛՛ Բողոքը ՎԶԵԲ-ին կոչ է անում ՛՛ծրագիրը դասակարգել որպես Ա դասի ծրագիր՛՛, ինչպես նաև

[5] *Տե՛ս նույն տեղում*, էջ 4
[6] *Տե՛ս նույն տեղում*, էջ 6
[7] *Տե՛ս նույն տեղում*
[8] *Տե՛ս նույն տեղում*

՝՝Հայաստանի ողջ տարածքը ճանաչել ծրագրի ազդեցության գոտի, քանի որ ծրագիրն իր ազդեցությունն ունի ջրի ռազմավարական պաշարների վրա, որոնք ապահովում են Հայաստանի ողջ բնակչության ապրուստը, ինչպես նաև վտանգում է կենսբազմազանությունը և մշակութային ժառանգությունը, որի ոչնչացումը կխաթարի հայ ժողովրդի զարգացման իրավունքը՝՝:[9]

Այսպիսի մտահոգությունները դուրս են սույն Ծրագրի ներքո ՎԶԵԲ-ի նախատեսած գործունեությունների շրջանակից: Ծրագրի ներքո նախատեսված գործունեությունները ներառում են ՝՝հորատման և իրագործելիության ուսումնասիրությունները՝՝[10] և ֆինանսավորումը, որը նախատեսված է ՝՝աջակցելու դրա շարունակական ուսումնասիրությունը, նախնական զարգացումը և Հայաստանում Ամուլսար հանքի շահագործման համար թույլտվությունների ձեռք բերման աշխատանքները՝՝:[11]

10. Նմանապես, Վայոց Ձորի Գնդևազ գյուղի բնակիչների կողմից ներկայացված ՝՝Լիդիան No. 2՝՝ Բողոքը, որտեղ ենթադրաբար առաջարկվում է, որ կույտային ալկալահանման հարմարություն պետք է կառուցվի, պնդում է, որ ՝՝իրական ռիսկերը չեն գնահատվել՝՝ և, հետևաբար, որ Հաճախորդը ՝՝հանրային լսումների ժամանակ ... մոլորեցրել է Գնդևազի գյուղացիներին՝ վստահեցնելով, որ նոր ծրագիրը համապատասխանում է միջազգային չափանիշներին՝՝:[12] Հետևաբար, այս Բողոքը, կարծես, կրկին պնդում է, որ Բանկը չի կարողացել 2008թ.-ի ԲՍՔ ՊԿ 1-ի համաձայն ծրագրի պատշաճ գնահատում ապահովել: Օրինակ, այս Բողոքը պահանջում է, որ ՎԶԵԲ-ը ՝՝պետք է հետազոտի՝՝ Ծրագիրը և պետք է ՝՝հաշվի առնի մեր կարծիքները՝՝:[13] Ակնհայտ է, որ պատշաճ կերպով իրականացված բնապահպանական և սոցիալական գնահատումը կբավարարի պահանջներից երկուսն էլ:[14]

11. Մեկ անգամ ևս, ՝՝Լիդիան No. 2՝՝ Բողոքը ավելի շուտ կենտրոնանում է հետագայում առաջարկվող արդյունահանման գործառնությունների վրա, քան հետախուզման և ծրագրի նախապատրաստման գործունեությունների վրա, որոնք ներկայումս ֆինանսավորում է Բանկը: Օրինակ, Բողոքը ներկայացնողները մտահոգություն են հայտնում ՝՝ոսկու հանքի բաց շահագործման և կույտային ալկալահանման համարության կառուցման վերաբերյալ՝՝ և հաստատում են, որ իրենց Բողոքի առարկան ՝՝Ամուլսարի հանքի խնդիրն է՝՝:[15]

ՎԶԵԲ-ի ղեկավարության դիրքորոշումը

12. Ի պատասխան ՝՝Լիդիան No. 1՝՝ Բողոքի, Բանկի ղեկավարությունը պնդում է, որ Բողոքը վերաբերում է ՝՝Հաճախորդի հետագա առաջարկվող գործունեությանը, մասնավորապես՝ նոր հանքի մշակմանը և արդյունահանման փուլին, այլ ոչ թե ՎԶԵԲ-ի ներկայիս ծրագրին, որն է՝ աջակցել Ընկերության հետազոտական գործունեություններին՝՝:[16] Ինչ վերաբերում է ՎԶԵԲ-ի ներկայիս ծրագրի շրջանակներում թույլատրվող գործունեություններին, Բանկի ղեկավարությունը մատնանշում է, որ ՎԶԵԲ-ը Լիդիանի կապիտալում յուրաքանչյուր մասնակցային

---

[9] *Տե՛ս նույն տեղում*
[10] ՈՒՆԳ - Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք), ԾԱՓ 42182, ապրիլի 27, 2012թ.
[11] ՈՒՆԳ - Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք), փոփոխված ԾԱՓ 42182, օգոստոսի 13, 2014թ.
[12] Բողոք No. 2, 2014/03, էջ 1
[13] *Տե՛ս նույն տեղում*
[14] Հիմնվելով ՎԶԵԲ-ի բնապահպանական և սոցիալական գնահատման համապատասխան և կիրառելի պահանջների նպատակների և էական տարրերի վրա, տե՛ս ԿԿ 1.2-1.5.
[15] Բողոք No. 2, 2014/03, էջ 1
[16] Ղեկավարության պատասխանը, սեպտեմբերի 25, էջ 3

բաժնի համար բնապահպանական և սոցիալական գնահատում է իրականացրել, ինչպես նաև, որ ՝՝ՎԶԵԲ-ը մշտադիտարկել է ընկերության համապատասխանությունը համաձայնագրի (համաձայնագրերի) պայմաններին և գոհ է, որ ընկերությունը հետազոտությունների իր ներկայիս գործունեությունների մասով բավարարում է ՎԶԵԲ-ի պահանջները՝՝:[17]

13. ՎԶԵԲ-ի ղեկավարությունը շեշտադրում է ներկայիս հետազոտությունների ու ծրագրի նախապատրաստման աշխատանքների և հետագայում առաջարկվող հանքարդյունաբերության գործառնությունների միջև տարբերակումը՝ բացատրելով, որ ՝՝[ի]նչ վերաբերում է ՎԶԵԲ-ի ներդրմանը և մինչ օրս ՝՝Լիդիանի՝՝ ձեռնարկած գործունեություններին, բողոքի նամակում նշված ՝՝ծրագրի ազդեցության գոտին՝՝ ենթակա է միայն հետախուզական գործունեություններից բխող շրջելի, սահմանափակ և տեղայնացված ազդեցությունների՝՝:[18] Ղեկավարությունը շարունակում է պնդել, որ

՝՝Բողոքը ներկայացնողի հայցը ընդլայնել ՝՝ծրագրի ազդեցության գոտին՝՝՝ ընդգրկելով տեղին չի լինի հետախուզական աշխատանքների համար և նման ծրագրի համար այդ հայցն ընդունելը անհամատեղելի կլինի ՎԶԵԲ-ի գործող քաղաքականությունների հետ: ՎԶԵԲ-ի Բնապահպանական և սոցիալական քաղաքականությունը և Կատարողականի պահանջները վերաբերում են բնապահպանական և սոցիալական այն խնդիրներին, որոնք կարող են առաջանալ ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող գործունեության արդյունքում՝՝:[19]

Ղեկավարությունը մատնանշում է, որ Ծրագիրը դասակարգվել է որպես ՝՝Բ՝՝ դասի ծրագիր՝ ելնելով բնապահպանական և սոցիալական գնահատման նպատակներից, հիմնականում, որովհետև իրականացվող գործունեությունները ՝՝ավելի շուտ վերաբերում են հետախուզական գործունեություններին, քան հանքի շահագործմանը՝՝:[20]

14. Ղեկավարությունը պնդում է, որ ՝՝ՎԶԵԲ-ը ֆինանսավորում չի տրամադրել Ամուլսարի հանքի շահագործման համար՝՝ և մատնանշում է, որ ներկայումս հանքարդյունաբերության նմանատիպ ծրագրի համար բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատումն ընթացքի մեջ է.

> ՝՝Հետագայում առաջարկվող հանքի գործարկման ու շահագործման տեխնիկական խնդիրները պատշաճ կերպով կքննվեն ներկայիս ընթացիկ բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատման գործընթացում, իսկ շահագրգիռ կողմները հնարավորություն կունենան հայտնել իրենց մտահոգությունները և ստանալ իրենց հարցերի պատասխանները՝՝:[21]

15. Ինչ վերաբերում է հանրային մասնակցությանը, Բանկի Ղեկավարությունը պնդում է, որ պարբերական նամակագրական կապի մեջ է եղել Ծրագրի տարբեր շահագրգիռ կողմների հետ և, ընդհանուր առմամբ, 2008թ.-ի ԲՍՔ ԿՊ 1-ը և ԿՊ 10-ը պահանջում են, որպեսզի ՝՝ՎԶԵԲ-ի բոլոր հաճախորդները պահպանեն Օրհուսի Կոնվենցիայի այն սկզբունքները, որոնք վերաբերում են հանրության մասնակցությանը շրջակա

---

[17] *Տե՛ս նույն տեղում*
[18] *Տե՛ս նույն տեղում*
[19] *Տե՛ս նույն տեղում*
[20] *Տե՛ս նույն տեղում,* էջ 1
[21] *Տե՛ս նույն տեղում,* էջ 3

միջավայրի վրա էական ազդեցություն ունեցող կոնկրետ գործունեությունների մասով որոշումների կայացմանը:՛՛[22]

Հաճախորդի դիրքորոշումը

16. Ի պատասխան ՛՛Լիդիան No. 1՛՛ Բողոքի, ՛՛Լիդիան Ինթերնեյշնլ՛՛-ը մատնանշում է, որ ընկերությունը՝ Հայաստանում իր դուստ ընկերության՝ ՛՛Գեոթիմ՛՛ ՓԲԸ-ի հետ միասին հանձնառու է աշխատել միջազգային լավագույն գործելակերպերին համապատասխան: Ավելի կոնկրետ, ընկերությունը բացատրում է, որ իր մի շարք ներքին կորպորատիվ քաղաքականությունների միջոցով ընկերությունը իրականացնում է Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) Կատարողականի չափանիշները և ՎԶԵԲ-ի Կատարողականի պահանջները:[23]

17. Ի հավելումն, ՛՛Լիդիան Ինթերնեյշնլ՛՛-ը բացատրում է, որ ընկերությունը համայնքային ներգրավման աշխատանքները մեկնարկել է հետախուզական վաղ գործունեությունների հետ զուգահեռ՝ դեռևս 2006թ.-ին: Հետագայում՝ 2010թ.-ին, այս համայնքային ներգրավումը պաշտոնականացվել է՝ ընկերության Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագրի (ՇԿՆԾ) մշակմամբ և Համայնքի հետ կապի հանձնաժողովի (ՀԿՀ) ամենամսյա հանդիպումների նախաձեռնմամբ:[24] Հաճախորդի պատասխանում նաև մանրամասնված է 2007թ.-ից ի վեր անցակցված համայնքի ներգրավման հանդիպումների և հանրային միջոցառումների երկար ցանկը:[25]

18. ՛՛Լիդիան Ինթերնեյշնլ՛՛-ը նաև մանրամասնորեն պատասխանում է ՛՛Լիդիան No. 1՛՛ Բողոքում պարունակվող նշանակալի անհամապատասպանության մասին յուրաքանչյուր պնդմանը, այդ թվում այն հայտարարություններին, որոնք վերաբերում են բնապահպանական գնահատման ադեկվատությանը, կապարի և կադմիումի աղտոտման ռիսկերին, ջրի աղտոտման ռիսկին, ռադոնի բարձր կոնցետրացիաների ռիսկին, բնուսական և կենդանական աշխարհների պահպանվող և վտանգված տեսակներին սպառնացող ռիսկերին, ինչպես նաև Ջերմուկ առողջարանային հանգստավայրին սպառնացող տնտեսական ռիսկերին:[26]

V. ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

<u>Խնդիրների լուծման նախաձեռնության համար իրավունակության որոշում</u>

19. Չնայած ՛՛Լիդիան No. 1՛՛ Բողոքը բացահայտ կերպով չի նշում, թե Բողոքը ներկայացնողները ԾԲՄ որ գործառույթից են փորձում օգտվել, Իրավունակությունը գնահատողների համար միանգամայն պարզ է, որ նրանք միայն Համապատասխանության վերանայում են հայցում:[27] Օրինակ, Բողոքն ուղղակիորեն ակնարկում է ՛՛առողջության պահպանման և առողջ շրջակա միջավայրի քաղաքացիների իրավունքների կոպիտ խախտումները՛՛ և ՛՛ՎԶԵԲ-ի կողմից

---

[22] *Տե՛ս նույն տեղում,* էջ 3
[23] ՛՛Լիդիան Ինթերնեյշնլ՛՛-ի պատասխան, հունիսի 19, 2014թ., էջ 1
[24] *Տե՛ս նույն տեղում*
[25] *Տե՛ս նույն տեղում, էջ 8-16*
[26] *Տե՛ս նույն տեղում, էջ 2-8*
[27]

հայտարարված սոցիալական և բնապահպանական պատասխանատվության հետևյալ չափանիշների խախտումները՝՝[28]՝ միևնույն ժամանակ տեսակետ հայտնելով, որ ՝՝հարկ է աուդիտ անցկացնել և գնահատել մեր Բողոքում ներկայացված այն ռիսկերը, թե արդյոք ՎԶԵԲ-ի գործողությունները *համապատասխանում են* իր իսկ չափանիշներին:՝՝[29] Նմանապես, ՝՝Լիդիան No. 2՝՝ Բողոքը ներկայացնում է Բողոքը ներկայացնողների մտահոգություններն այն մասին, որ [առաջարկվող հանքարդյունաբերության] Ծրագիրը *չի համապատասխանում* ՝՝միջազգային չափանիշներին՝՝ և, որ Հաճախորդը ՝՝ապակողմնորոշել է Գնդևզաի գյուղացիներին՝՝՝

Ուստի, Իրավունակությունը գնահատողները կարծում են, որ երկու Բողոքներն էլ անիրավունակ են Խնդիրների լուծման նախաձեռնության համար:

Համապատասխանության վերանայման համար իրավունակության որոշում

ԾԲՄ ԿԿ 19

22. Սահմանելով Համապատասխանության վերանայման համար իրավունակության հիմնական չափորոշիչները՝ ԾԲՄ ԿԿ 19-ը նշում է, որ ՛՛Բողոքը պետք է.
    ա) առնչվի այն Ծրագրին, որի ֆինանսավորումը հաստատել է Խորհուրդը կամ Բանկի հանձնաժողովը, որը լիազորված իրավասու մարմին է եղել այդ Ծրագիրի համար Բանկի ֆինանսավորումը վերջնական հաստատելու համար; և
    բ) նկարագրի վնասը, որը Ծրագիրը պատճառել է, կամ հնարավոր է, որ պատճառի:

23. Միանգամայն պարզ է, որ երկու Բողոքներն էլ սահմանում են վնասը, որը Ծրագիրը պատճառել է, կամ հնարավոր է, որ պատճառի՝ համաձայն ԾԲՄ ԿԿ 19(բ) կետի պահանջների:[34] Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ դրանում նկարագրված ամբողջ վնասը ավելի շուտ վերաբերում է ոսկու արդյունահանման առաջարկվող գործունեությունների հնարավոր ազդեցություններին, քան հետախուզման և ծրագրի նախապատրաստման գործունեությունների վրա:[35]

24. Ի հավելումն, 2008թ.-ի ԲՍՔ նպատակներից ելնելով՝
    ՛՛՛՛ծրագիր՛՛ տերմինը վերաբերում է *բիզնես գործունեությանը, որի համար* հաճախորդը *ՎԶԵԲ-ից ֆինանսավորում է հայցում՝ անկախ ՎԶԵԲ-ի գործառնության տեսակից:* ՎԶԵԲ-ի գործառնությունը (այն է՝ ֆինանսավորում տրամադրելու գործողությունը) կազմված է առաջարկվող ծրագրերի համար տարբեր տեսակի ֆինանսավորումների շարքից, ինչպիսիք են՝ ծրագրի ֆինանսավորումը / սահմանափակ ռեսուրսների ֆինանսավորումը, կոպորատիվ ֆինանսավորումը, շրջանառու միջոցները, կիսա-մասնակցային ներդրումը, *մասնակցային ներդրումը* կամ դրամաշնորհները՛՛:[36] (շեշտադրումն ավելացված է)

Ուստի, հետևում է, որ ընկերության բիզնես գործունեությունները, որի կապիտալում Բանկը մասնակցային բաժին ունի կարող են, ԾԲՄ ԿՊ 19(ա) կետի նպատակներից ելնելով, ՛՛Ծրագիր՛՛ կազմել: Պարզ չէ, սակայն, որ Բողոքներից որևէ մեկը վերաբերում է այն գործունեություններին, որոնք ֆինանսավորման համար հաստատված Ծրագրի մի մասն են կազմում՝ համաձայն ԾԲՄ ԿՊ 19(ա) կետի պահանջների:

---

[34] Տե՛ս Բողոք No. 2014/02, էջ 2-4, ինչը վերաբերում է, *ի թիվս այլոց,* սահմանադրության և ազգային օրենսդրության իրավական դրույթների խախտմանը, ջրին և հողին սպառնացող ռիսկերին, ռադոնի հնարավոր համակենտրոնացմանը և ուրանի աղտոտմանը, բուսական և կենդանական աշխարհներին սպառնացող ռիսկերին, Ջերմուկ առողջարանային հանգստավայրին սպառնացող ռիսկերին և թափոնների պոչամբարի հետ կապված ռիսկերին: Տե՛ս նաև Բողոք 2014/03, էջ 1, ինչը վերաբերում է թափոնների պոչամբարի հետ կապված ռիսկերին, այդ թվում՝ ցիանիդով աղտոտման ռիսկերին և աշխատողների և տեղի բնակչության անվտանգությանը սպառնացող ռիսկերին:

[35] Տե՛ս ստորև

[36] 2008թ.-ի ԲՍՔ, էջ 5, 17-րդ կետ

25. Ինչպես նշվեց վերևում, երկու Բողոքներն էլ հիմնականում մտահոգված են Ամուլսարում առաջարկվող ոսկու հանքի բաց շահագործման հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցություններով: Ուստի, իրավունակությունը որոշելու նպատակներից ելնելով հիմնական հարցադրումները դիտարկում են, թե արդյոք Բանկը հաստատել է Ամուլսարում ոսկու հանքի բաց շահագործումը կամ, որպես այլընտրանք, արդյոք ոսկու հանքարդյունահանման գործունեությունների հնարավոր ազդեցությունները պետք է դիտարկվեին բնապահպանական և սոցիալական այն գնահատման շրջանակներում, որն իրականացվել է հետախուզման և ծրագրի նախապատրաստման հաստատված գործունեությունների առնչությամբ:

26. Ինչ վերաբերում է առաջին հարցադրմանը, կարևոր է նշել, որ ՎԶԵԲ-ը ցանկացած առաջարկվող ՝՝Ա՝՝ դասի Ծրագրի համար վերանայում է Լիդիանում կատարված ներդրման ներքո պահանջվող Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատումը:[37] Ուստի, ստացվում է, որ ԾԲՄ ԿՊ 19(ա) կետի նպատակներից ելնելով՝ Ամուլսարում առաջարկվող ոսկու հանքարդյունաբերության Ծրագիրը, ըստ էության, չի կարող դիտարկվել որպես Ծրագիր, որի ֆինանսավորումը հաստատվել է, այլ ավելի շուտ, որ ՎԶԵԲ-ը, որպես ՝՝Լիդիանի՝՝ բաժնետեր, վերանայում է փաստաթղթերը:

27. Ի հավելումն, 2008թ.-ի ԲՍՔ-ի 17-րդ կետը բացատրում է, որ ՝՝՝՝ծրագիրը՝՝ վերաբերում է *բիզնես գործունեությանը, որի համար հաճախորդը ՎԶԵԲ-ից ֆինանսավորում է հայցում՝՝,* իսկ ՝՝Լիդիան Ինթերնեյշնլ՝՝-ի և ՎԶԵԲ-ի միջև հաջորդաբար կքնված կապիտալում գրանցվելու համաձայնագրերը և օժանդակ պայմանագրային պայմանավորվածությունները հստակորեն սահմանում են, որ ՎԶԵԲ-ի ֆինանսական միջոցները կարող են օգտագործվել միայն հետախուզման և ծրագրի նախապատրաստման գործունեությունների համար, և ոչ թե, ըստ էության, ոսկու հանքարդյունահանման գործունեությունների համար: Օրինակ, 2012թ.-ին թվագրված ՝՝Լիդիան Ինթերնեյշնլ՝՝-ի նամակը ՎԶԵԲ-ին, որը վերաբերում է 2009թ.-ին կնքված կապիտալում գրանցվելու համաձայնագրի ներքո ՎԶԵԲ-ի 3,634,514 կանադական դոլարի չափով մասնակցային նոր ներդրմանը, ներառում է Հաճախորդի պաշտոնական և հանդիսավոր հանձնառությունը ՎԶԵԲ-ի նոր ֆինանսական միջոցներն օգտագործել բացառապես հետախուզման գործունեությունների համար.

> ՝՝Սույնով նախատեսված ՎԶԵԲ-ի նախապատվության իրավունքների իրականացման համաձայն՝ Ընկերությունը համաձայնում է ՎԶԵԲ-ի կողմից ստացված ամբողջ ֆինանսական միջոցներն օգտագործել Հայաստանի ծրագրի համար և *բացառապես հետախուզման աշխատանքների և ուսումնասիրությունների իրականացման նպատակներով, այլ ոչ թե որևէ նախնական աշխատանքների համար, որոնք առնչվում են Ամուլսարի հանքը որպես լիարժեք արտադրություն զարգացնելուն՝՝.*[38] (շեշտադրումն ավելացված է):

Նույն կերպ, 2014թ.-ին ՝՝Լիդիան Ինթերնեյշնլ՝՝-ի և ՎԶԵԲ-ի միջև կնքված կապիտալում գրանցվելու նոր համաձայնագիրը ՎԶԵԲ-ի ֆինանսական միջոցներն օգտագործելու վերաբերյալ հստակ և պարտադիր սահմանափակումներ է ներառում՝ ապահովելով, որ.

՝՝ՎԶԵԲ-ը գոհ կլինի, եթե կապիտալում ՎԶԵԲ-ի գրանցումից ստացված հասույթը ՝՝Գեոթիմ՝՝ ՓԲԸ-ի կամ Ամուլսարի ծրագրում հատուկ ներառված Ընկերության այլ դուստ կազմակերպությունների միջոցով օգտագործվի *Ամուլսարի*

[37] 2008թ.-ի ԲՍՔ ԿՊ 1.9-ի ներքո
[38] Նախապատվության իրավունքների մասին նամակ, մարտի 19, 2012թ., 12-րդ կետ

ծրագրի տեխնիկական ուսումնասիրությունները, ծրագրին առնչվող գոծառնական ծախսերը և ՝՝Իրագործելիության ուսումնասիրության՝՝ ավարտը ֆինանսավորելու համար: Ընդ որում, ՎԶԵԲ-ը պետք է ստանա կապիտալում ՎԶԵԲ-ի գրանցումից ստացված հասույթներն ըստ ՎԶԵԲ-ի պահանջի առաջարկվող օգտագործման ձևերը հավաստող ապացույցները:՝՝[39] (շեշտադրումն ավելացված է)

Այս դիրքորոշումը հաստատում են ՝՝Լիդիան Ինթերնեյշնլ՝՝-ում ՎԶԵԲ-ի յուրաքանչյուր ներդրման համար մշակված Ծրագրի ամփոփ նկարագրի փաստաթղթերը, որոնք վերաբերում են միայն ՝՝հորատման և իրագործելիության ուսումնասիրություններին՝՝[40] և ՝՝Հայաստանում Ամուլսար հանքին առնչվող Լիդիանի շարունակական հետախուզման, նախնական զարգացման և թույլտվությունների ձեռք բերման աշխատանքներին աջակցելու համար՝՝[41] ֆինանսավորման տրամադրմանը: Ուստի, բիզնես գործունեությունը, որի համար Հաճախորդը ֆինանսական միջոցներ է հայցել և, հետևաբար, Բանկի կողմից հաստատված Ծրագիրը սահմանափակվում է հետախուզման և ծրագրի նախապատրաստման աշխատանքներով: Դա թույլ է տալիս կարծել, որ ներկայիս երկու Բողոքն էլ ՝՝վաղաժամ՝՝ են այն իմաստով, որ դրանք վերաբերում են այնպիսի գործունեությունների, որոնք ներառված չեն ՎԶԵԲ-ի ներկայիս ծրագրի շրջանակներում: Որպես այլընտրանք, դրանք կարող են ՝՝վաղաժամ՝՝ համարվել այն պատճառով, որ վերաբերում են առաջարկվող Ծրագրին, որի ֆինանսավորումը դեռևս չի հաստատվել և, հետևաբար, դրանք չեն բավարարի ԾԲՄ ԿՊ 19(ա) կետի պահանջները, որոնք Համապատասխանության վերանայման համար իրավունակությունը որոշելու հրամայական պահանջ են հանդիսանում:

28. Հնարավոր է փաստարկել, այնուամենայնիվ, որ օգտակար հանածոների հետախուզում ներառող ցանկացած ծրագրի բնապահպանական և սոցիալական գնահատումը և ոսկու բաց արդյունահանման ծրագրի նախապատրաստական գործունեությունները պետք է ներառեն հետագայում նախատեսվող փաստացի հանքարդյունահանման գործունեությունների հնարավոր ազդեցությունների դիտարկումը: Առաջին հայացքից կարող էր թվալ, որ 2008թ.-ի ԲՍՔ-ն կաջակցեր նման դիրքորոշումը: Օրինակ, ԿՊ 1.6-ը սահմանում է, որ.

> ՝՝Բնապահպանական և սոցիալական ազդեցությունները կգնահատվեն ծրագրի ազդեցության շրջանակների համատեքստում: Ազդեցության այս շրջանակը կարող է ներառել ... (v) այն տարածքներն ու համայնքները, որոնց վրա հնարավոր է ազդեն. ծրագրի նախատեսված հետագա զարգացումից կումուլյատիվ ազդեցությունները … և ծրագրին առնչվող այլ զարգացումները, որոնք կարելի է իրատեսորեն ակնկալել նախնական ուսունասիրությունը իրականացնելու պահին:՝՝

Ի հավելումն, 2008թ.-ի ԲՍՔ-ի 3-րդ կետը սահմանում է Բանկի հանձնառությունը ՝՝խթանել Եվրամիության (ԵՄ) բնապահպանական չափանիշները՝՝, այդ թվում, օրինակ, ԵՄ Բնապահպանական ազդեցությունների գնահատման (ԲԱԳ) դիրեկտիվայում[42] ամրագրված չափանիշները, որը 1997թ.-ից ի վեր կումուլյատիվ բնապահպանական ազդեցությունների գնահատումը ներառել է որպես պարտադիր

[39] ՝՝Լիդիան Ինթերնեյշնլ՝՝-ի և ՎԶԵԲ-ի միջև կնքված Կապիտալում գրանցվելու համաձայնագիր, մարտի 21, 2014թ., Հոդված 4.01(ծ): Տե՛ս նաև Հոդված 5.01

[40] ՈՒՆԳ - Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք), ԾԱՓ 42182, ապրիլի 27, 2012թ.

[41] ՈՒՆԳ - Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք), փոփոխված ԾԱՓ 42182, օգոստոսի 13, 2014թ.

[42] Շրջակա միջավայրի վրա որոշակի պետական և մասնավոր ծրագրերի ազդեցությունների գնահատման մասին 85/337/EEC դիրեկտիվաշ: Համախմբված տարբերակը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://ec.europa.eu/environment/eia/pdf/EIA_Directive_informal.pdf

պահանջ: ԵՄ ԲԱԳ դիրեկտիվային հատուկ չափանիշների նկատմամբ հանձնառությունը վերահաստատվում է 2008թ.-ի ԲԱՔ ողջ փաստաթղթում:[43]

29. Այնուամենայնիվ, չնայած որ առաջին հայացքից կարող է թվալ, որ հետագայում նախատեսվող ոսկու հանքարդյունահանման գործունեությունները կարող են, ԿՊ 1.6(v) կետի նպատակներից ելնելով, որակավորվել որպես ՝՝ծրագրի նախատեսված հետագա զարգացում՞՞ կամ ՝՝ծրագրին առնչվող այլ զարգացումներ, որոնք կարելի է իրատեսորեն ակնկալել՞՞, համոզիչ գործնական պատճառաբանումներ կան, թե ինչու տվյալ դեպքում այսպիսի մեկնաբանությունը ճիշտ չէր լինի: Այդ պատճառաբանումներից մեկն այն է, որ հնարավոր զգալի բացասական ազդեցությամբ (ինչպիսին է, օրինակ, բաց հանքի շահագործումը) ՝՝Ա՞՞ դասի Ծրագրի իմաստալից գնահատումն անպայմանորեն բնապահպանական ու սոցիալական ազդեցությունների ամբողջական և խորը գնահատում (ԲՍԱԳ) կներառի,[44] որը չի կարող իրականացվել հետախուզման և ծրագրի նախապատրաստման համապատասխան գործունեությունների ավարտից առաջ: Հնարավոր չէ պատշաճ ԲՍԱԳ իրականացնել, քանի դեռ զգալի պատկերացում չկա հանածոների տեղակայման մասին և, դրանից ելնելով, հանքի շահագործման և անհրաժեշտ հարմարությունների մասին, հանքարդյունահանման և համապատասխան այլ տեխնիկաների կիրառման մասին, ինչպես նաև հետևանքները մեղմելու անհրաժեշտ միջոցառումների մասին: Հետախուզման և ծրագրի նախապատրաստման գործունեությունների նպատակն է մշակել այդ պատկերացումները: Հետախուզման և ծրագրի նախապատրաստման գործունեությունների մասով իրականացված ԲՍԱԳ-ը, որը ենթադրաբար պետք է դիտարկեր նաև հանքարդյունահանման հետագա ցանկացած գործունեության հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, հիմնված կլիներ թերի և սպեկուլյատիվ տեղեկատվության վրա և, ըստ էության, ոչ ադեկվատ կլիներ:

30. Հարկ է նաև նշել, որ կումուլյատիվ գնահատման պահանջն անպայմանորեն սահմանափակված է ՝՝համաչափության՞՞ և ՝՝ողջամտության՞՞ սահմանափակումներով:[45] Այսպիսի առաջադրանքի գործնական անհնարինությամբ պայմանավորված՝ այն անհիմն ծանրաբեռնվածություն կպարտադրեր Հաճախորդին և, ի վերջո, ՎԶԵԲ-ին՝ ապհովելու, որպեսզի ամբողջությամբ շահագործվող ոսկու հանքի հետ կապված հնարավոր բոլոր ազդեցությունները համապարփակորեն դիտարկվեն դեռևս ավելի վաղ՝ հետախուզման և ծրագրի նախապատրաստման փուլում: Նաև, կարծես թե, բավականին անտրամաբանական կլիներ թույլ տալ, որպեսզի այս Բողոքները Համապատասխանության վերանայում անցնեին այն ժամանակ, երբ ներկայումս ընթացքի մեջ է բնապահպանական և սոցիալական ազդեցությունների խիստ գնահատման գործընթացը, որը ոսկու արդյունահանման

---

[43] Օրինակ, ԿՊ 1.9-ում՝ ՝՝Ա՞՞ դասի Ծրագրերին առնչվող ՎԶԵԲ-ի կատարած ԲԱԳ/ՍԱԳ հաշվետվությունների ձևաչափի վերաբերյալ, և ԿՊ 6.2-ում՝ Բանկի կենսաբազմազանության պահպանման և կենդանի բնության ռեսուրսների կայուն կառավարման մասին ՎԶԵԲ-ի քաղաքականությունների վերաբերյալ

[44] 2008թ.-ի ԲԱՔ 9-րդ կետի համաձայն, այսպիսի Ծրագիրը

՝՝բնապահպանական և/կամ սոցիալական ազդեցությունների համապարփակ գնահատում կպահանջի, որպեսզի բացահայտվեն և գնահատվեն առաջարկվող ծրագրին առնչվող հնարավոր հետագա բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, բացահայտվեն հնարավոր բարեփոխումների հնարավորությունները, և անհրաժեշտ միջոցառումներ առաջարկվեն, որոնք թույլ կտան խուսափել կամ եթե հնարավոր չէ խուսափել, ապա նվազեցնել և մեղմացնել բացասական ազդեցությունները՞՞:

[45] ԾԲՄ-ի ողջամտության և համաչափության ընդհանուր պահանջների կիրառման մասին տեղեկատվություն ստանալու համար տե՛ս Բողոք No. 2011/06: *Ombla ՀԷԿ-ի* Համապատասխանության վերանայման զեկույցի 30-րդ կետը, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.ebrd.com/downloads/integrity/Ombla_CRR.pdf

առաջարկվող գործառնությունը անցնում է որպես ՝՝Ա՝՝ դասի Ծրագիր: Իհարկե, կումուլյատիվ գնատման պահանջների այպիսիս ՝՝անհամաչափությունը՝՝ և ՝՝անտրամաբանությունը՝՝ ծագում է ներկայիս դեպքի բավական կոնկրետ փաստերից, և շատ դեպքերում ծրագրի գնահատումը պետք է դիտարկի բոլոր այն գործունեությունները, որոնք համարվում են ՝՝ծրագրի նախատեսված հետագա զարգացում՝՝ կամ ՝՝ծրագրին առնչվող այլ զարգացումներ, որոնք կարելի է իրատեսորեն ակնկալել՝՝:

31. Ի հավելումն, ԿՊ 1.6(v) կետով սահմանված պահանջի շատ խիստ մեկնաբանումը, այն է՝ այսպիսի կումուլյատիվ ազդեցությունները դիտարկել ավելի վաղ՝ հետախուզման և ծրագրի նախապատրաստման փուլում, անխուսափելիորեն կխոչընդոտեր այնպիսի Ծրագրերի հաստատումը, ինչպիսին է ընթացիկ աջակցությունը ՝՝Լիդիան Ինթերնեյշնլ՝՝-ին ծրագրի նախապատրաստման գործունեությունների մասով, որի նպատակն է ապահովել ոսկու արդյունահանման հնարավոր գործունեությունների հնարավոր լավագույն բնապահպանական և սոցիալական արդյունքները: Այս տեսանկյունից, հետաքրքիր է նշել, որ սահմանելով Բանկի հանձնառությունը ապահովել իր կողմից ֆինանսավորվող Ծրագրերի բնապահպանական կայունությունը և իրավական համապատասխանությունը, 2008թ.-ի ԲՍՔ-ի 3-րդ կետը նշում է, որ.

> ՝՝Բանկի դերն է. (i) վերանայել հաճախորդի գնահատումը; (ii) ԿՊ պահանջներին համահունչ՝ *օգնել հաճախորդներին պատշաճ և արդյունավետ միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի խուսափել բնապահպանական և սոցիալական բացասական ազդեցություններից կամ, եթե հնարավոր չէ խուսափել դրանցից, ապա նվազեցնել, մեղմել, չեզոքացնել կամ փոխհատուցել դրանք;* (iii) *օգնել բացահայտել բնապահպանական և սոցիալական լրացուցիչ օգուտների հնարավորությունները;* և (iv) մշտադիտարկել ծրագրերի համապատասխանությունը դրանց մասով բնապահպանական և սոցիալական պայմանավորվածությունների հետ այնքան ժամանակ, որքան Բանկը պահպանի ծրագրի նկատմամբ ֆինանսական հետաքրքրությունը:՝՝[46] (շեշտադրումն ավելացված է):

Ներկայիս Ծրագրի ներքո իրականացվող ծրագրի նախապատրաստման աշխատանքները կարող են Բանկին մեծապես օժանդակել կատարել այդ դերը:

32. Հարկ է շեշտել, սակայն, որ տվյալ երկու Բողոները կարող են միայն ՝՝վաղաժամ՝՝ համարվել, քանի որ չեն բավարարում ԾԲՄ ԿԿ 19(ա) կետով սահմանված իրավունակության պարտադիր պահանջները: Ուստի հետևում է, որ նմանատիպ Բողոքները կարող են իրավունակ համարվել ինչպես Համապատասխանության վերանայման, այնպես էլ Խնդիրների լուծման նախաձեռնության համար, եթե և երբ Ամուլսարում ոսկու հանքարդյունահանման առաջարկվող Ծրագիրը ՎԶԵԲ-ի 2008թ.-ի ԲՍՔ-ի ԿՊ 1.9 կետով պահանջվող ԲՍԱԳ անցնի և Բանկը հաստատի այդ ծրագրի ֆինանսավորումը:

[46] Տե՛ս նաև Բողոք No. 2010/01: D1Ավտոմայրուղի Փուլ 1-ի Համապատասխանության վերանայման զեկույցի 51-րդ կետը, որը հասանելի է հետևյալ հղմամբ.
http://www.ebrd.com/downloads/integrity/Compliance_Review_Report_D1_Slovakia_FINAL.pdf

33. Ինչ վերաբերում է իրավունակության փոքր ինչ պակաս հրամայական պահանջներին, որոնք սահմանված են ԾԲՄ ԿԿ 20-ով, Բողոքները զգալիորեն թերանում են: Ինչպես նշվեց վերևում, Բողոքներից և ոչ մեկը բացահայտ կերպով չի նշում, թե համապատասխան Բողոքը ներկայացնողները ԾԲՄ որ գործառույթից են փորձում օգտվել բարձրացված խնդիրներին անդրադառնալու համար՝ համաձայն ԾԲՄ ԿԿ 20(ա) կետի: Չնայած որ, երկու Բողոքներն էլ առաջարկում են, որ Բողոքները Համապատասխանության վերանայում են հայցում:

34. Ի հավելումն, Բողոքներից և ոչ մեկը չի ներառում ՛՛Բանկի կամ այլ Համապատասխան կողմերի միջև գրավոր նամակագրության, ծանուցումների կամ հաղորդակցությանն առնչվող այլ նյութերի պատճենները՛՛, ինչպես դա սահմանված է ԾԲՄ ԿԿ 20(գ) կետով, թեև ՛՛Լիդիան No. 1՛՛ Բողոքը որոշակի ՎԶԵԲ-ի հետ Բողոքը ներկայացնողների հաղորդակցությունների որոշակի մանրամասներ է ներկայացնում, որոնք վերաբերում են Ծրագրի ենթադրյալ անհամապատասխանության մասին իրենց մտահոգություններին:[47]

35. Բացի այդ, Բողոքներից և ոչ մեկը հստակ և ճշգրիտ ՛՛մարմամասներ չի ներկայացնում Բողոքի քննարկման առարկա հանդիսացող ՎԶԵԲ-ի համապատասխան քաղաքականության մասին՛՛՝ համաձայն ԾԲՄ ԿԿ 20(դ) կետի: Մինչդեռ ՛՛Լիդիան No. 2՛՛Բողոքը չի փորձում ՎԶԵԲ-ի որևէ կոնկրետ քաղաքականություն բացահայտել, ՛՛Լիդիան No. 1՛՛ Բողոքը 2008թ.-ի ԲՍՔ-ով սահմանված մի շարք Կատարողականի պահանջներ[48] է նշում, թեև, ինչպես նշվեց վերևում, մանրամասնորեն չի բացատրում, թե ինչպես են Կատարողականի այդ պահանջները խախտվել կամ հնարավոր է, որ խախտվեն: Ըստ էության, Բողոքը կենտրոնանում է ենթադրվող անհամապատասխանության միակ էական հիմքի վրա, այն է՝ 2008թ.-ի ԲՍՔ ԿՊ 1-ի համաձայն կատարված բնապահպանական և սոցիալական գնահատման ադեկվատությունը – հստակորեն չնշված մի քանի Կատարողականի պահանջներից մեկը:

36. Այնուամենայնիվ, երկու Բողոքներն էլ ներկայացնում են ՛՛ԾԲՄ գործընթացի օգտագործման արդյունքում հայցվող ելքի (ելքերի) մասին նշումները՝ համաձայն ԾԲՄ ԿԿ 20(բ) կետի: Օրինակ, ՛՛Լիդիան No. 1՛՛ Բողոքն ակնկալում է, որ ՎԶԵԲ-ը ՛՛աուդիտ կիրականացնի և կգնահատի մեր Բողոքում շարադրված ռիսկերը՛՛՝ ապահովելու Բանկի սեփական չափանիշների և ազգային օրենսդրությամբ սամանված չափանիշների պահանջներին ՛՛ամբողջական համապատասխանությունը՛՛[49], մինչդեռ ՛՛Լիդիան No. 2՛՛ Բողոքն ակնկալում է, որպեսզի ՛՛ՎԶԵԲ-ը դադարի ֆինանսավորել այդ հանցավոր ծրագիրը՛՛ և ՛՛հաշվի առնի մեր կարծիքներն ու չխախտի մեր իրավունքները՛՛:[50]

37. Հարկ է նշել, սակայն, որ ԾԲՄ ԿԿ 20-ով սահմանված պահանջներին չհամապատասխանելը շատ հազվադեպ կարող էր հիմք հանդիսանալ այլ առումով իրավունակ Բողոքը որակազրկելու համար: ԾԲՄ-ն և դրան նախորդող համակարգը՝ Անկախ ռեսուրսների մեխանիզմը (ԱՌՄ) վաղուց արդեն իրավունակության նկատմամբ ճկուն մոտեցում են որդեգրել և ցանկություն են ցուցաբերել

[47] Բողոք No. 2014/02, էջ 5
[48] Բողոք No. 2014/02, էջ 2, որտեղ խոսվում է ԿՊ 3, ԿՊ 4, ԿՊ 5, ԿՊ 6, ԿՊ 7, ԿՊ 8, ԿՊ 10 մասին
[49] Բողոք No. 2014/02, էջ 6
[50] Բողոք No. 2014/03, էջ 1

՝՝իմաստավորել՝՝ այլ առումներով իրավունակ Բողոքները, որոնց դեպքում Բողոքող կողմերը պայքարել են Բողոքի իրավունակության համեմատաբար բարդ տեխնիկական պահանջները բավարարելու համար:[51] Ամեն դեպքում, ԾԲՄ ԿԿ 20-ը սոսկ ներկայացնում է, որ ՝՝Բողոքը, *հնարավորության դեպքում,* պետք է նաև ներառի՝՝ ԿԿ 20 (ա)-(դ) կետերում սահմանված մանրամասները, դրանով իսկ ճանաչելով այդ պահանջներին հատուկ ճկունությունը:

ԾԲՄ ԿԿ 23

38. Ինչ վերաբերում է ԾԲՄ ԿԿ 23-ով սահմանված չափորոշիչներին, որոնք պետք է դիտարկվեն Համապատասխանության վերանայման համար իրավունակությունը որոշելու նպատակով, երկու Բողոքներն էլ, կարծես, բավարարում են այդ կարգում սահմանված պահանջները: Եթե հաստատվեր, որ քննարկման ենթակա հանդիսացող հարցերը, ԾԲՄ ԿԿ 19(ա) կետի նպատակներից ելնելով, որակավորվում են որպես հաստատված Ծրագիր, գործողությունները կամ անգործությունը, որոնց անդրադառնում են Բողոքները կհամարվեին ՝՝Բանկի պատասխանատվությունը՝՝՝ ինչպես դա պահանջվում է ԾԲՄ ԿԿ 23(ա) կետով: Քանի որ երկու Բողոքներն էլ կենտրոնանում են ԲՍՔ ԿՊ 1-ի ներքո պահանջվող բնապահպանական և սոցիալական գնահատման վրա, կասկածները քիչ են, որ դա կարող էր համապատասխանել Բանկի պատասխանատվությանը:[52]

39. ԾԲՄ ԿԿ 23(բ) կետով պահանջվում է, որ Բողոքում ներկայացված անհամապատասխանությունների բոլորն ենթադրյալ հիմքերը պետք է ՝՝ավելին լինեն, քան ՎԶԵԲ-ի համապատասխան քաղաքականության չնչին խախտում, բացառությամբ, եթե ենթադրվում է, որ այդ խախտումը վնաս է պատճառել՝՝: Հիմնվելով նախկինում գրանցված մի շարք դեպքերի վրա՝ ԾԲՄ-ն սահմանել է, որ բնապահպանական և /կամ սոցիալական հնարավոր էական ազդեցությունները գնահատելու և դրանք մեղմացնելու ենթադրյալ անհաջողությունները համարվում են ավելին, քան զուտ չնչին տեխնիկական խախտում՝՝:[53] Այպիսով, ներկայացված Բողոքները բավարարում են ԾԲՄ ԿԿ 23(բ) կետի պահանջները:

40. Քանի որ երկու Բողոքներն էլ վերաբերում են հնարավոր հետագա հանքարդյունաբերության գործունեությունների բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ադեկվատ գնահատում անցկացնելու անհաջողությանը, դրանք չեն ենթադրում, որ ՝՝Բանկը չի կարողացել մշտադիտարկել ՎԶԵԲ-ի համապատասխան քաղաքականության համաձայն Հաճախորդի ստանձնած հանձնառությունները՝՝, ինչպես դա սահմանված է ԾԲՄ ԿԿ 23(գ) կետում, ուստի ԾԲՄ ԿԿ 23(բ) կետը, կարծես, տեղին չէ:[54]

---

[51] Տե՛ս, օրինակ, Բողոք 2005/02, Սախալին II-ի Իրավունակության գնահատման զեկույցի 15-րդ կետը, որը հասանելի է հետևյալ հղմամբ. http://www.ebrd.com/downloads/integrity/0501ear.pdf

[52] Տե՛ս, օրինակի համար, Բողոք 2012/04: EPS Կոլուբարայի շրջակա միջավայրի բարելավման ծրագրի Իրավունակության գնահատման զեկույցի 59-րդ կետը, որը հասանելի և հետևյալ հղմամբ. http://www.ebrd.com/downloads/integrity/ear_kolubara.pdf

[53] Տե՛ս Բողոք 2012/04: EPS Կոլուբարայի շրջակա միջավայրի բարելավման ծրագրի Իրավունակության գնահատման զեկույցի 60-րդ կետը

[54] Տե՛ս Բողոք 2012/04: EPS Կոլուբարայի շրջակա միջավայրի բարելավման ծրագրի Իրավունակության գնահատման զեկույցի 61-րդ կետը

41. Ի վերջո, ոչինչ չի վկայում, որ Բողոքներից որևէ մեկը ներառում է ԾԲՄ ԿԿ 24-ով սահմանված որևէ հանգամանք, որը կբացառեր դրանց իրավունակությունը: ԾԲՄ ԿԿ 24-ը սահմանում է, որ.

    ՛՛Բողոքն իրավունակ չի լինի ո՛չ Խնդիրների լուծման նախաձեռնության, և ո՛չ էլ Համապատասխանության վերանայման համար, եթե.

    ա) այն խարդախությամբ կամ թեթեևամիտ կամ չարամիտ նպատակներով է ներկայացվել;
    բ) դրա հիմնական նպատակն է տեղեկատվությունը բացահայտելով կամ Ծրագիրը հետաձգելով՝ մրցակցային առավելության հասնել;
    գ) այն խարդախության մեղադրանքներ է ներկայացնում կամ վերաբերում է գնումների խնդիրներին…;
    դ) այն վերաբերում է Բանկի հիմնադրման համաձայնագրի 1-ին հոդվածին, Պորֆոլիոյի հարաբերակցության քաղաքականությանը, կամ որևէ այլ հատուկ քաղաքականությանը՝ ինչպես կարող է ժամանակ առ ժամանակ սահմանվել Խորհրդի կողմից;
    ե) այն վերաբերում է ՎՁԵԲ-ի քաղաքականությունների համարժեքությանը և համապատասխանությանը;
    զ) այն վերաբերում է այնպիսի խնդիրներին, որոնց մասով ԾԲՄ-ն կամ դրան նախորդող համակարգն արդեն իսկ Բողոք է քննել…՛՛

42. Գրեթե կասկած չկա, որ Բողոքներից յուրաքանչյուրը ներկայացրել են բարեխիղճ Բողոքողները՝ ՎՁԵԲ-ի համապատասխան քաղաքականությանը Բանկի համապատասխանության մասին օրինական ու տրամաբանական մտահոգություններ հայտնելով: Երկու սերտորեն կապակցված Բողոքներ ներկայացվել են Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) Համապատասխանության հարցերով խորհրդատու օմբուդսմենին (ՀԽՕ): Դրանցից մեկը իրավունակ է ճանաչվել Համապատասխանության գնահատման համար[55], իսկ մյուսը ներկայումս քննվում է Օմբուդսմենի կողմից[56]: Այդուհանդերձ, վերոնշյալը չի ազդի Իրավունակությունը գնահատողների եզրակացությունների վրա: Իրավունակությունը գնահատողները հիմնականում դիտարկել են Համապատասխանության վերանայման համար յուրաքանչյուր Բողոքի իրավունակությունը, և այն փաստը, որ ՛՛Բողոքի առարկան քննվել է համաֆինանսավորող որևէ հաստատության Պատասխանատվության մեխանիզմով՛՛ հիմնականում ոչ մի նշանակություն չունի:[57]

Այսպիսով, Իրավունակությունը գնահատողները գտնում են, որ երկու Բողոքներն էլ իրավունակ չեն Համապատասխանության վերանայման համար:

---

[55] Բողոք: Հայաստան: Լիդիան Ինթլ3-01/Գնդևազ և Ջերմուկ, հասանելի և հետևյալ հղմամբ. http://www.cao-ombudsman.org/cases/case_detail.aspx?id=221

[56] Բողոք: Հայաստան: Լիդիան Ինթլ3-02/Գնդևազ և Ջերմուկ, հասանելի և հետևյալ հղմամբ. http://www.cao-ombudsman.org/cases/case_detail.aspx?id=222

[57] Տե՛ս նաև ԾԲՄ ԿԿ 24(զ) կետը, որը հստակորեն սահմանում է, որ

՛՛Եթե Բողոքը Համապատասխանության վերանայում է հայցում, մեկ այլ պատասխանատվության մեխանիզմով դրա քննումը չի խանգարի, որպեսզի Բողոքը քննվի նաև այս կանոնների ներքո՛՛

VI. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

43. Իրավունակությունը գնահատողները որոշեցին, որ ո՛չ ՛՛Լիդիան No. 1՛՛ Բողոքը, և ո՛չ էլ ՛՛Լիդիան No. 2՛՛ Բողոքը իրավունակ չեն ո՛չ Խնդիրների լուծման նախաձեռնության և ո՛չ էլ Համապատասխանության վերանայման շրջանակներում քննվելու համար:

44. Բողոքների և ոչ մեկը Խնդիրների լուծման նախաձեռնության շրջանակներում քննվելու հայց հստակորեն չի ներկայացնում, իսկ բողոքի առարկա հանդիսացող գործունեությունը (դեռևս) չի ձևավորվում որպես Ծրագիր, որի համար բանկը հետաքրքրվածություն ունենա ֆինանսավորում տրամադրել: Ի հավելումն, ամեն դեպքում հավանականությունը փոքր է, որ Խնդիրների լուծման նախաձեռնությունը կօգնի լուծել դիտարկվող վեճը կամ որևէ այլ կերպ դրական արդյունք ապահովել:

45. Թեև երկու Բողոքներն էլ, կարծես, բավարարում են իրավունակությունը որոշելու համար ԾԲՄ ԿՊ-երում սահմանված չափորոշիչներից շատերին, երկուսն էլ չափազանց ՛՛վաղաժամ՛՛ են, քանի որ դրանք ավելի շուտ վերաբերում են Ամուլսարում ոսկու արդյունահանման գործառնությունների հնարավոր առաջարկին, քան Բանկի կողմից արդեն իսկ հաստատված ընթացիկ Ծրագրի ներքո իրականացվող գործունեություններին:

46. Միակ Ծրագիրը, որը հաստատել է Բանկը, վերաբերում է ՛՛Լիդիան Ինթերնեյշնլ՛՛-ի կապիտալում ՎԶԵԲ-ի մասնակցային ներդրումն է, որի հասույթների օգտագործումը սամանափակվում է միայն հետախուզման գործունեություններով և ծրագրի նախապատրաստման աշխատանքներով: Իրավունակությունը գնահատողները որոշեցին, որ այս մասնավոր դեպքում անհամաչափ և անիմաստ կլինի պահանջել ոսկու արդյունահանման առաջարկվող գործունեությունների հետ կապված բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցությունները ներառել ՛՛Լիդիան Ինթերնեյշնլ՛՛-ում ՎԶԵԲ-ի գործող ներդրմանն առնչվող կումուլյատիվ ազդեցությունների շրջանակում:

47. Երկու Բողոքների անիրավունակությունը Համապատասխանության վերանայման շրջանակներում քննվելու համար բխում է բացառապես դրանց ՛՛վաղաժամկետությունից՛՛: Այսպիսով, նմանատիպ Բողոքները կարող են իրավունակ ճանաչվել, եթե և երբ Ամուլսարում ոսկու արդյունահանման առաջարկվող Ծրագիրը անցնի պահանջվող ԲՍԱԳ-ը և Բանկը հաստատի դրա ֆինանսավորումը: